# ԶՈՀՎԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՉՊԵՏՔ Է ՈՐԲՈՒԹՅՈՒՆ ԶԳԱՆ

Դժբախտությունը հաճախ անշահախնդիր մտերմությամբ միավորում է մարդկանց։ Այդպիսի ջերմ կապ է ստեղծվել Արցախում զոհված Սարո Սարդարյանի և Սամվել Վիրաբյանի կանանց՝ Անահիտի և Օֆիկի միջև։ Երկուսն էլ անչափահաս երեխաներ ունեն և ընտանիքի ողջ բեռը կրում են իրենց ուսերին։

Անահիտը և Սարոն Ղարաբաղցի են, հանդիպել են Երևանում, ընտանիք կազմել։ 1988 թվին Երևանի համալսարանն ավարտելուց հետո, Սարոն ստեղծել է առաջին կամավորական ջոկատներից մեկը և մեկնել Հադրութի շրջան։

— «Հայեր միացեք, միացեք հայեր, քաջերի հույր մեզ է սպասում»,— քաղցր թոթովանքով երգում է Սարոյի երեք տարեկան աղջնակը՝ Թամարիկը, որը հայրը չի հիշում և «հայրիկ» բառը այդպես էլ չի արտասանել...» Որդին՝ Շահենը, 8 տարեկան է, նրա աչքերից արդեն պարզորոշ երևում են հոր կորցրած մանչուկի թախիծն ու լրջությունը, անհոգ մանկության հետք անգամ չկա։ Տղայի առողջությունը բարվոք չէ, ողնաշարի թերություն ունի։ Տիկին Անահիտը շնորհակալական զգացմունքով նշում է, որ բժշկական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (տնօրեն՝ Ա. Թորոսյան) Շահենին անվճար բուժում է։ Անահիտը փոքրիկների հետ բնակվում է բժիշկների կատարելագործման ինստիտուտի հանրակացարանում։ Նրանց ամեն ամիս որոշակի օգնություն է հատկացնում Արաբկիրի առևտրաարտադրական միավորումը՝ տնօրեն Աշոտ Վարդումյան։

Իսկ Արծվաշենում քաջաբար զոհված Սամվել Վիրաբյանը երեք անչափահաս աղջիկ ունի՝ Անուշիկ, Արփորդ և Անահիտ։ Հիմա նրանց և Սամվելի թոշակառու ծնողների խնամքը ստանձնել է կինը՝ Օֆիկը։ Բնակվում են Փափազյան փողոցի թիվ 21 շենքում։ Նույն շենքի 1-ին հարկում վերանորոգված խանութի սեփականատերը հնարավորին սահմաններում հոգում է այդ ընտանիքի կարիքները, աղջիկների համար նրանք խնայդրամարկղում հաշիվ են բացել և երկու տարի է, ինչ ամեն ամիս յուրաքանչյուր երեխայի համար որոշակի գումար են փոխանցում։

Ալբերտ Երիցյանի և Աշոտ Վարդումյանի մարդասիրական արարքը պետք է գեղեցիկ օրինակ ծառայի հնարավորություն և միջոցներ ունեցող մյուս հայերի համար։ Պետք է սատարել բոլոր զոհվածների ընտանիքներին։ Չէ՞ որ նրանք զրկվել են ոչ միայն հայրական քնքշանքից, այլև կերակրողից։

ԷԼԻՏԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ